

թուի է հոգեկան գեղեցկութիւններ վերա-
կոչելով:

Արիւնգ քերթուածը էէ կարելի նախա-
մուտ մը համարել, ուր պիտի ամփոփ-
ուէին մատեանի ընդհանուր գիծերը. ան-
կախ քերթուած մ'է եղէգի մասին որ՝
սրինգ եղած է, խորոտիկ լուռ խոկացող
կուրծքի մը մօտիկ, որ պիտի երգէ ան-
ծայր ամայութեանց մէջ անհունի շուն-
չով:

Պատահական էէ առաջին քերթուածը
«Կը սիրե՞ս զիս»:

Ե. Դուրեան սիրոյ ճամբով պիտի կա-
րենայ վեր բարձրանալ դէպի խաչը, պի-
տի ըմբռնէ Անտառիկն խորքը կազմող
հօր բուռն սէրը դէպի ստահակ որդին եւ
ներդուլութեան աստուածային գեղեցկու-
թիւնը: Խաչը մտածուած ու խոր իմաստ-
ներով եւ զգացուած սրտով սիրոյ գերա-
զոյն արտայայտութիւնը պիտի կազմէ
եւ այս լարին վրայ ընթերցողը պիտի լսէ
Նայումաժը, Ետեւէս եկուր, Վերջին
վայրկեանը, Եմմաուսի ճամբորդները,
եւ այլն: Ստէպ պիտի հանդիպինք պայ-
մանադրական Եթէներու, որոնք իր սի-
րած կրկնակները պիտի կազմեն, սակայն
ոչ պատկերի մը կամ մտածութեան մը
պակասէն հարկադրուած, ինչպէս մեր
արեւելահայ բանաստեղծները, որոնք ըս-
տէպ կը մեղանչեն այս կրկնակներով ա-
ւելնի նուազում ցոյց տալով, այլ Դու-
րեանի մէջ հեղհեղէտ ու ժողովրդեան կը
հասնի որոշ վերջակէտի մը որ անէժէ
Հարթին (ոսկեղէն) նըման դառնում փռշի:
Կամ Նայումաժի գեղեցիկ քերթուածին
մէջ, Քանի անգամ-ներու զանազանեալ
սրտկերներով, պիտի գտնենք լաց եւ
զղջում:

Օր մ'ալ դարձար ինձ լըռիկ
Ի՞նչ պակուցի՞ բան մը կար մէջն աչերուդ
Որ երբ նայումաժի ինձ ուղղեցիր լացի ես
Կամ քափուած ի՞նչ կար սրտիս խորը
Որ գոջացի դառնապէս:

[մութ

Երբեմն կը զգացուի Ե. Դուրեանի

քերթուածներուն մէջ բառերու եւ տա-
ղաչափութեան փնտռութիւններ, կարծես
արուեստակեալ սողեր ըլլան, սակայն
ըստ իս կատարելութեան իր ձգտումն է
որ զինքը մղեր է յանդերու կատարելու-
թիւն եւ բառերու ճշտութիւն փնտռելու,
ըլլալու համար հայերէնի կարօտ եւ ան-
փոյթ զրոյներուն օրինակ:

Հովուական սրինգ-ին մէջ կան նաեւ
խումբ մը քերթուածներ, որոնք անուղ-
ղակի կապ ունին իր կրօնաշունչ ուղղու-
թեան հետ: Այսպէս Արիւնգիս, Լուսնի
տակ, Անտառիկն մէջ, Աղի արձանը եւն.,
պիտի յիշեցնեն սիրած ինքնայատուկ ոճը,
խորհրդապաշտ հոգին, գեղեցիկ իմաս-
տութիւն մը քնարերգութեան լարերով
երգուած: Նա զրեթէ ամէն քերթուածի
վերջաւորութիւնը անակնկալ գիւտով մը
կը կատարէ, այսպէս Աղի արձանը պիտի
վերջացնէ:

- Կուրծքին տակ պինդ բաբախեց տրոփ
մը քափուն -

Շուշանի բո'յրը գոր շնչած էր երէկ,
Տատրակի ձայնը գոր լըսած էր այգում
Արշալոյսէն քաղած շողերն ալ բեկբեկ
Իրեմն ամէն հեշտամեքերով աղուանոյշ,
Իր պաշտպանին մէջ խրտացած կարծեց
կիմն...

Ու դուստր մարդկան, ուզեց նայիլ ամ-
բգոյշ
Իր ետեւէն եկող աղուոր հրեշտակին...

Նոյն անակնկալ վերջաւորութիւնը պի-
տի գտնենք Պուտտա եւ Յիսուս բաղդա-
տական քերթուածին մէջ, կամ մաղթանք
մը, աղօթք մը բանաստեղծութեան նիւ-
թին համեմատ, տալու համար գեղեցիկ
վերջալոյս մը, ինչպէս պիտի պատկերա-
նար Յիսուսի օրերուն Երուսաղէմի վրայ:

Ընթերցողն անցնելով Յիսուսի ծնուն-
դէն մինչեւ Դողդոթա, երթալով Եմմա-
ուս տրտում եւ թախծալից կորսուած
յոյսի մը համար, ամէն էջի վրայ հոգե-
կան սփոփանք պիտի գտնէ. կարծես աղօ-
թամատոյց մը ձեռքին մէջ կը խօսի Աս-

տուծոյ հետ, կամ զղջման ցաւեր կը զգայ
իր սրտին խորը եւ անպայման սրահանջ
մը կայ իր ներսը գիմելու ներշնչուած
Մաղթանքով առ Հոգին Սուրբ, որ տայ

Կայք մը ոտի. նայումաժ մ'ի վեր
Կ'ուզեմ, այո', Հոգւոյդ ի սէր
Կ'ուզեմ ըլլալ հոգի մը նոր: ...

Երկու փոքրիկ մատեաններ, ինչպէս
աղաւնիի զոյգ թռչելը, Դրուագներ Մա-

նուկ Յիսուսի կեանքին եւ Հովուական
սրինգը բաւական զօրութիւն ունին միշտ
վեր բռնելու եւ գեղեցիկ կապոյտին հաս-
ցընելու Եղիշէ Պատրիարք Դուրեանը. եւ
արդարօրէն իրաւունք կու տան բոլոր ա-
նոնց որ անդամ մը եւս վառեցին իրենց
ջահերը որակաւոր բանաստեղծի մը հա-
րիւրամեակին ընդառաջ երթալու համար:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԷՍ



1914 թուականը կանխող թրքահայու-
թեան վեց վաղանցիկ երջանիկ տարիներ-
ու ընթացքին, Թուրքիոյ մէջ ապրած ու
ներկայիս տակաւին ողջ եղող հայեր եթէ
կան, ինչպէս նաեւ Կովկասէն եւ Եգիպ-
տոսէն, անոնք անշուշտ կը յիշեն, հայու-
թեան պարծանք ջուրթակահար «վիրթի-
էօղ» Դաւիթ Դաւիթեանը, ունկնդրած
ըլլալով անոր նուազածութիւններուն կամ
այն ատենուան՝ հայ եւ օտարազգի մա-
մուլի հրատարակութիւններէն լսած ըլ-
լալով անոր համբաւը:

Դաւիթեան՝ չիկահեր, կապուտաչուի,
միջահասակ, բարեկազմ, համեստ, զգա-
յուն նկարագրով, համակրելի երիտա-
սարդ մըն էր, եւ մտերմական շրջանակի
մէջ՝ զուարթարան:

Ծնած է Տրապիզոն, 1880ին, բարեկեցիկ
ծնողքէ: Իր նախնական ուսումը կ'ընէ
տեղւոյն Միսիթարեան վարժարանին մէջ
լուսահոգի Հ. Մինաս Վ. Նուրիխանեանի
տեսչութեան շրջանին, ուսկից յետոյ, իր

ուսումը շարունակելու համար կ'ուղարկ-
ուի Վենետիկ՝ Մուրատ-Ռափ. վարժա-
րան, ուր եւս յաջողութեամբ կը լրացնէ
իր դասընթացը:

Պատանեկան տարիքէն ըլլալով ջերմ
սիրահար մը ջուրթակահարութեան, նոյն
ճիւղին համար, Տրապիզոնի մէջ իր առա-
ջին ուսուցիչը կ'ըլլայ Տիգրան Կիւրեղեան
- բարեխիշտակ Իգնատիոս Արքեպիսկ.
Կիւրեղեանի, Վենետիկ Միսիթարեան
Միսիթարեան Արքահօր եղբորորդին -,
որ տարիներ առաջ աշակերտած էր Վենե-
տիկ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին
մէջ ու հոն՝ իտալացի դասատուէ մը ու-
սած ջուրթակահարութիւնը:

Դաւիթեան եւս, Վենետիկ իր աշակեր-
տութեան ընթացքին կ'ունենայ ջուրթակի
ուսուցիչ իտալացի ջուրթակահար մը, որ
տեսնելով իր այս ժրջան աշակերտին
արտակարգ ընդունակութիւնը, մասնաւոր
հոգածութիւն կ'ընծայէ անոր յառաջագի-
մութեան:

Իր ուսանողական շրջանը Մուրադ-Ռաֆայելյան վարժարանին մէջ եւս յաջողութեամբ աւարտելէ յետոյ, Դաւիթեան՝ բոլորովին կը նուիրուի իր սիրած ասպարէզին - Զուլթականութեան - , եւ զայն կատարելագործելու համար կ'անցնի Պրիւքսէլ՝ աշակերտելու պելճիզացի հռչակաւոր ջութակահար Թոմասին, եւ կարճ ժամանակի ընթացքին կը հասնի, կարելի է ըսել, իր վարպետին հաւասարող «վիրթիւզօ»ի աստիճանին, եւ քաջակերտած իր ուսուցչէն, ինքնավստահ, իր զլխուն մէջ ամբարած ըլլալով եւրոպացի համբաւաւոր հեղինակներու գործերէն ճոխ նուագացանկ մը, կը մեկնի Պրիւքսէլէն ու կ'երթայ Թիֆլիս, ուր իր բնտանեկան պարագաները փոխադրուած էին Տրապիզոնէն, հոն տեղի ունեցած 1895ի հայկական ջարդէն անմիջապէս ետքը:

Կովկասի դանդաղ քաղաքներու մէջ «կատարելագործուած-ջութակահար»ի իր համբաւը տարածուելէ յետոյ, Թուրքիոյ Սահմանադրութեան «Հիւրերէթ»ի - Ազատութեան - բարեբաւոր տարիներուն (1908 - 1914) կը ծրարէ երթալ նաեւ Թուրքիա, ուր հայութեան համար ըստեղծուած էր խանդավառ շրջան մը: Աւագ, խաբուսիկ ու կարճատեւ:

Պաթումէն շոգնաւով կ'երթայ նախ իր ծննդավայրը՝ Տրապիզոն, ուր կը գտնէ սիրալիր ընդունելութիւն իր ազգականներէն եւ վաղեմի բարեկամներէն: Հոն՝ յոյն մեծահարուստ Կոստաքի Թէօֆիլաք-Թոսի կառուցանել տուած թատրոնին մէջ, մեծ յաջողութեամբ կու տայ յաջորդական երկու նուագածութիւններ, յոյն եւ քաղաքին եւրոպական զաւութէն ներկայ եղող երկսեռ երաժշտասէրներու հիացման արժանանալով:

Տրապիզոնէն կը մեկնի Պոլիս, ուր եւս իր քանի մը նուագածութիւններով բարձրորէն կը գնահատուի:

Պոլսական մամուլի երաժշտական քննադատները, անխոր, Դաւիթեանի զբոսաւորութիւնը կ'ընեն, գտնելով անոր մէջ, որ-

քան կատարելագործեալ «թէքնիք», նոյնքան եւս առինքնող զգայութիւն:

Պոլսէն յետոյ շրջապտոյտի մը ելլելով, նախ կ'երթայ Իզմիր, ուր իր առաջին նուագածութեան կատարեալ յաջողութենէն հմայուած, տեղւոյն մեծանուն բժիշկ Դոկտ. Կոստանեան անոր կը նուիրէ իր սեփական թանկարժէք ջութակը «Սթրատիվարիուս», որուն վրայ Դաւիթեան կու տայ իր երկրորդ նուագածութիւնը, այս անգամ քաղաքին միջազգային ընտանի դասակարգի խումն բաղմունքեան մը ներկայութեան, եւ աւելի մեծ յաջողութիւն կ'ունենայ:

Եզրպտահայերու կողմէ եղած հրաւերին ընդառաջելով կ'երկարէ իր շրջապտոյտը մինչեւ Ադրբայճանի եւ Գահրէ: Այս երկու քաղաքներուն մէջ եւս կ'ունենայ փայլուն ընդունելութիւն եւ մեծ համակրանք:

Եզրպտահայ Պոլիս վերադարձին, ուրկէ պիտի անցնէր Կովկաս, մեր՝ - Հէքիմեաններու - նախաձեռնութեամբ եղած հրաւերին սիրայօթար պատասխանելով, եկաւ Սամսոն եւ քաղաքին նորակառույց մեծ շէնք թատրոնին մէջ, ուր կը պատկանէր տեղացի հարուստ Նէմիլզատէի, Դաւիթեան տուաւ երեք նուագածութիւններ, համբաւաւոր հեղինակներու գլուխ-գործոցներէն դատ, նաեւ իր իսկ հեղինակութիւններէն՝ «Հայու հոգի» - զոր առաջին անգամ նուագած էր էջմիածնի մէջ բարեյշատակ Վեհափառ Իզմիրլեանի Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծումին օրը սարքուած հանդէսին եւ Անոր նուիրած «Նէյիմ ոգբը» եւ այլն, առանց մոռնալու հայ ժողովրդական «Կոռնկի»:

Հայ, յոյն, հրեայ եւ եւրոպացի երկսեռ ներկաներու որոտընդոտ ծափերու «պիս»երու, կեցցէ՛ներու ձայները, իրաքանչիւր նուագէ յետոյ, կը թնդացնէ թատրոնին բովանդակ սրահը. ու վերջ տին՝ երբ յարգալիր ժպտը գէմքին, բնագալով կը յառաջանար, կը կանգնէր ջութակին յետնամասը հաղիւ թէ կզակի՝



Կեդրոնը ցուցադրուած է ոգբ. Դաւիթ Դաւիթեանի լուսանկարը: Ետեւը, ձախէն աջ. - Պր. Ստեփան Քիւրքեան, զարմիկը - Օր. Մարիան Դաւիթեան, բոյրը - Պր. Պր. Օրոն Հէֆիմեան, Խաչիկ Սորկուճեան, փիւռ Հէֆիմեան - մօտաւոր ազգականները: Լուսանկարուած Սամսոն, 1913ին:

տակ կը զետեղէր, անմիջական՝ սրահին մէջ հանդարտութիւնը կը տիրէր, ու բոլոր ներկաները միահամուռ, լռիկ-մնջիկ, յափշտակուած կ'ունենդրէին «Սթրատիվարիուս»ին չորս լարերուն վրայ իր ձախ ձեռքի ճկուն մատներու թեթեւաշարժ հպումովն ու աջ ձեռքին բռնած ճպտին արագ վերիվարումներէ հնչող բիւրեղաձայն նուագին, որպէս թէ ջութակն ըլլար հաղորդակից իր զգայուն հոգւոյն:

Սամսոնի յունական «Ֆիլարմոնիք» խումբին բաղձանքին ընդառաջելով, Դաւիթեան՝ իր երկրորդ նուագածութեան, քաղաքին յունական վարժարանի բարձրագոյն դասարաններու աշակերտութեան տրամադրեց, վեհանձնօրէն եւ ճշրիւարար, թատրոնի օթեակներուն վերելի սրահը:

Պէտք է յիշատակեմ, որ նախորդ նուագածութեան արդէն հայկական վարժա-

րանի շուրջ 200 աշակերտութեան եւս սիրայօթար նոյնանման «ժէսթ» մը ըրած էր:

Դաւիթեանի համբաւը հասնելով նաեւ Մարզուան - Սամսոնէն 140 քիլոմէթր հեռու - տեղւոյն «Ամերիկեան Գոլէճ»ի երիտասարդ աշակերտութեան բուն բաղձանքին գոհացում տալու իր բնածին բարեացակամութեամբ, յետաձգելով իր Կովկաս վերադարձը, զարմիկիս՝ Խաչիկ Սորկուճեանի ընկերակցութեամբ, որ նոյն տարին Լոնտոնէն Սամսոն եկած էր մեր տան հիւր, եւ որ եղած էր վեհափառ Մուրադ-Ռաֆայելյան վարժարանին մէջ Դաւիթեանի դասընկեր, երկուքը միասին կ'երթան Մարզուան: Այնտեղ «Գոլէճ»ի ընդարձակ հանդիսասրահին մէջ, ներկայ հոծ բաղմունքեան եւ ամերիկացի ուսուցիչներու եւ ուսուցչուհիներու, ինչպէս նաեւ երկսեռ աշակերտութեան ներկայու-

Թեան կու տայ իր նուազածութիւնը, խանդավառ ծափեր խլելով իւրաքանչիւր նուազի վերջաւորութեան:

Հանդէսը չփակուած, Վարժարանին տնօրէնը՝ Տաքթրը Թրէյսի բեմ բարձրանալով, ջերմօրէն կը շնորհաւորէ ջութակահարը — հայերէն լեզուով — եւ կը դուրսանէ անոր զեղարուեստական բարձր տաղանդը, եւ դառնալով ներկաներուն կը դռնէ:

— Հայե՛ր... հպարտացէ՛ք ձեր այս մեծ «վերթիւէօղ»-ով:

Ափսո՛ս, սակայն, Դաւիթեանի այն միակ նուազածութիւնը Մարգուանի մէջ, իր կեանքին վերջինը պիտի ըլլար, որովհետեւ նոյն գիշերուան յաջորդ առտուն, քաղաքին մէջ շատ ցաւալի լուրի մը անմիջական տարածումը դառնօրէն կը խոցէ Մարգուանի հայութեան սիրտը:

ԴԱՎԻԹԵԱՆ ՅԱՆԿԱՐԾԱՄԱՀ...

Վաղահաս մահուան այս բօթը շուտով արձագանգ կը դնէ նաեւ Սամսոնի, Տրապիզոնի, Պոլսոյ, Իզմիրի եւ արտասահմանի, մասնաւորաբար Կովկասի մէջ, ուր անձկանօք կը սպասուէր անոր փառահեղ վերադարձը իր կատարած չրջատոյտէն:

Հայկական թերթերն ի մասնաւորի, առաջին էջերու վրայ ողբացեալին լուսանկարին առնթեր, կը ներբողէին անոր արտակարգ տաղանդը եւ կը սգային հայ արժէքի մը այս դառն կորուստը:

Պորհրդաւոր նկատուած հանգիստը մըն էր հէզ ջութակահարին նուազած վերջին եղանակը: Իր ամենագնահատած տաղանդաւոր հեղինակներէն, իտալացի «վերթիւէօղ» փականիների, «սօլ» ձայնի միակ լարին վրայ Մովսէսի աղօթքը:

Տարաբախտ երիտասարդին անհնազանդ մարմինը կը դառնէ իր իջեւանած պանդոկի սենեակի անկողինի մէջ, տակաւին նոր մահացած:

«Գոյէ՛ձ»-ին ամերիկացի բժիշկը՝ Տաքթրը Մարթինը զմոտեմբեկ յետոյ անոր մարմինը, դայն կը դնեն դադաղի մը մէջ, որուն կափարիչին գլուխի կողմը ապա-

կեայ լուսամտով էր ծածկուած, որպէսզի փափաքողներ կարենային տեսնել դժբախտ արուեստագէտին լայն ճակատով հերարձակ գլուխն ու համակրելի դէմքը:

Թիֆլիսէն՝ իր ընտանեկան պարագաներուն կողմէ եկած հեռագրական խնդրանքի մը համեմատ, դադաղը կը փոխադրուի Սամսոն, ուր Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ մէջ, երկու օր, մահարեմի մը վրայ կը ցուցադրուի ժողովուրդին, ու յետ եկեղեցական հանդիսաւոր արարողութեան, որ կը կատարուի երգհօնի, ջութակներու եւ սրինգի նուազածութեամբ, երկնեայ ծաղկէպսակներով ծածկուած ու չրջատուած դադաղը, վեց կտրիճ երիտասարդներու կողմէ ուսամբարձ, հայ եւ օտարազգի յուզարկաւորներու հսկայ թափօրի մը հետեւողութեամբ եւ հայկական երկու քոյր եկեղեցիներու զպիրներու դաշն երգեցողութեամբ, երբ Հայոց Թաղի գլխաւոր փողոցներէն կ'անցնէին, Հայ Առաքելական եկեղեցւոյ Առաջնորդարանին առջեւ կանգ կ'առնուի, ուր՝ այն ատենուան ժողովրդապետ Տէր Սահակ Վարդապետ Օտապաչեան* մօտենալով ննջեցեալին դադաղին՝ կը խօսի շատ յուզիչ դամբանական մը, ողբալով հայութեան այս վաղահաս անդին կորուստը, մինչ միւս կողմէ կը լսուէին թաղին երկու եկեղեցիներուն զանգակներուն տխրազգեցիկ զօղանջները:

Այս դադարէն յետոյ, թափօրը շարունակելով իր զանգաղաքայլ գնացքը, կը հասնի վերջին հանգրուանը՝ Հայ-կաթողիկէ եկեղեցւոյ եւ Առաջնորդարանին միջեւ գտնուող բակը, ուր կը կատարուի թաղումը մասնաւորապէս պատրաստուած կրողիւսածեփ դամբանի մը մէջ, նախօրը:

* Այն օրէն մէկուկէս տարի չանցած, 1915ին, այն պատուական եկեղեցականը Ապրիլեան մեծ եղեռնի առաջին նահատակներէն մէկը պիտի ըլլար, Սերատալոյ մօտերը:

տարին վախճանեալ Տրապիզոն-Սամսոն թեմերուն հովուապետ բարեյիշատակ Արիկեան եպիսկոպոսի զերեզմանին կից:

Հուսկ, ներկայ զպիրներէն երիտասարդի մը քաղցրածայն յուզումնալի մեներգով մը վերջ կը դնէ այն անմոռանալի տխուր յուզարկաւորութիւնը, որ առած էր համազգային ընդթ:

Ահա այսպէս անցաւ, երազի մը նման, մեծ երաժշտագէտին կեանքը: Շիջաւ արեւը երեսուներեքամեայ կենսունակ տարիքին, որը թողլով, իր կեանքի անբաժան ընկեր, երկու բիւրեղաձայն ջութակները: անէացան իր փայփայած փայլուն յոյսերը ապագայի նորանոր ստեղծադրութեանց:

Այս յուզարկաւորութենէն հաղիւ երկու շարաթ անցած, Թիֆլիսէն Սամսոն եկան ողբացեալին սգաւոր քոյրը՝ Մարիանէ եւ

զարմիկը՝ Ստեփան Բիւրքեան, այցելելու իրենց տարաբախտ հարազատի զերեզմանը, որուն առջեւ, խեղճ քոյրիկը, հոգեյոյզ եւ արտասուաթոր կը ծնրադրէ, ծաղկէփունջ մը կը դնէ վրան ու կ'աղօթէ: Սրտածմլիկ էր այս պատկերը, որ մտքիս մէջ քանդակուած պիտի մնայ, որքան ատեն որ ապրիմ:

Եւ ափսո՛ս, մէկուկէս տարի ետքը Սամսոնի հայութեան գլխուն եւս պայթելով տարազրութեան դժոխային չարաչառներու եւ ջարդի ահաւոր աղէտը, հոն՝ Սամսոնի մէջ պիտի մնար Դաւիթեանի զերեզմանը անշուք, առանց իրականանալու տեղւոյն հայ երիտասարդութեան զովքի ձեռնարկը, կանգնելու հանգուցեային հողակոյտին վրայ փառաւոր շիրիմ մը:

ՕԹՈՆ Յ. ՀԵՔԻՄԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

Դուն փոքրիկ ես սրտի չափ,
Մանուկ սրտի բարախուն.
Բայց պատմութիւնդ է անափ
Ալիքներով աղլըցուն:

Դուն փոքրիկ ես վարդի չափ,
Վայրի վարդի պէս ցնծուն.
Ծիածանով ոսկեկապ
Գեղեցիկութեան հարսն ես դուն:

Դուն փոքրիկ ես, Հայաստան,
Թիթեռնիկի պէս ոսկի.
Ամէն բացուող նոր դարնան
Ակը վերան մատանի:

Դուն փոքրիկ ես, Հայաստան,
Հայ սրտերուն թարմ ածու.
Սէր կը ցանեն ու կ'ըղձան
Սուրբ քարի տակ ննջելու: